

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԼԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԵՔ

Տարեկան դիմել 10 բուրձի. կէս տարեկան 6 բուրձի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелекъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(շաբթի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

ԱՌՎԱՆԴԱՌԻԹԻՆ

Բաղաբական տեսութիւն. — ՆԵՐՈՒՆ ՏԵՄՈՒԹԻՆ. Մասնագործութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱԲԱՆ ՏԵՄՈՒԹԻՆ. Արտաքին լուրեր. ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. — Մանրակար. — ՀԵՌԱՎԵՐԵՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԱՆԼԱՍԻՐԱԿԱՆ. — Նամակներ Յինդուստանի:

ԲԱՆԱԿԱՆ ՏԵՄՈՒԹԻՆ

Մենք առիթ ենք ունեցել խօսելու այն կնիքների մասին, որոնք խանգարում են հեռաւոր Արեւելքի խաղաղ քաղաքական կեանքը: Ձեր նայելով բազմաթիւ ջանքերին դեռ չէ կազմվել այնտեղ մի այնպիսի կացութիւն, որ միայն ընտանուութիւն ունենայ: Բարգուծութիւններ և միջազգային ծանր ընդհարումներ կարող են այնտեղ ծագել ամեն ժամանակ և առաջ բերել անսպասելի հետեւանքներ:

Ինչպէս յայտնի է, Չինաստանին արգելված էր ներմուծել զէնքեր և ռազմամթերք իր երկրի մէջ: Այդ հանգամանքը ունէր անարմատութիւններ թէ Չինաստանի և թէ եւրոպական մի քանի պետութիւնների համար: Չինաստանը զրկվում էր միջոցի շուտով և լիակատար կերպով զինել իր զինուորներին, իսկ եւրոպական երկիրները զրկվում էին մի մեծ վաճառանոցից, ուր նրանք առաջ վաճառահանում էին մեծ քանակութեամբ ռազմամթերք: Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից եւրոպական պետութիւններից մի քանիսի համար շատ ցանկալի է, որ Չինաստանը կարողանայ բաւականաչափ զէնք ունենալ զինազրական այժ ցոյց տալու համար հարկաւոր քաղաքական: Միջով այդ արգելքը վերացվեց և Չինաստանը կարողութիւն ստացաւ ազատ կերպով զէնք և ռազմամթերք մտցնել իր երկրի մէջ Եւրոպայից:

Եւ պէտք է նկատել, որ Չինաստանը եռանդուն կերպով զինվում և կատարելագործում է իր ռազմական կազմու-

թիւնը: Չինական զորքի մէջ այժմ շատ կան օտար հրահանգիչներ կամ ինստրուկտորներ, որոնք ջանք են գործ դնում մտցնելու եւրոպական կարգեր ռազմական կարգի մէջ: Օտարների մեծամասնութիւնը բաղկացած է եւրոպացիներից, որոնց վրա չինացիները նայում են իբրեւ աւելի ցեղական քաղաքական մարդկանց վրա: Եւրոպացիները մուտք են գործել, բայց այդ և շատ ուրիշ տարրերով, զբաղւած են զանազան կրթական և հասարակական հիմնարկութիւնների մէջ:

Ներկայումս հեռաւոր Արեւելքի ծովափերին մօտ շրջապատում են մեծ քանակութեամբ ռազմական: Բայց ռուսական և եւրոպական նաւերից, կան այդտեղ անգլիական, գերմանական, ամերիկական և ֆրանսիական ռազմական ներքին հետեւում են ընթացիկ գործերին և պատրաստ են պահուել իրանց գործի գիմը: Եթէ հրամայէ իրանց կառավարութիւնը: Պետութիւնները մրցում են միմեանց հետ և նրանցից իւրաքանչիւրը եռանդուն ջանքեր է գործ դնում ստանալու բացառիկ առանձնաշնորհումներ և արտօնութիւններ իր համար: Ահա հենց այդ մրցումը առաջ է բերում անսխառութիւններ, որոնք կարող են ծայրայեղ դէպքերում և դառնալ պատճառ պատերազմական գործողութիւնների:

Ինչ վերաբերում է մերձաւոր Արեւելքի այն մասին, ուր բռնկվում է մակեդոնացիների ապստամբութեան հրդեհը, շատ լուրջակալում է նախկին խառն վիճակը և նոր բարդութիւնների վառագր: Եւրոպան որոշել է չը միջամտել այդ գործի մէջ և զբաղւել ստեղծելի է մի այնպիսի դրութիւն, որ կազմվել են երկու կուռղ կողմեր, մի կողմից Թիւրքիան իր կանոնաւոր զորքերով, իսկ միւս կողմից մակեդոնացիները՝ իրանց ապստամբականներով: Արեւելք թափվում է, երկիրը աւերվում է, գիւղերը այրվում և քանդվում են, բայց Եւրոպան ձեռք չէ գտնում լուծել հարցը այնպէս, որ կարգ հաստատվի և մարդիկ հանգստանան: Մակեդոնացիները չեն հա-

ւատում թիւրքական ընթացիկների օգտակարութեան, ռուսի և չին կարողանում հետեւել այն խորհրդին, որ նրանց տալիս են եւրոպական պետութիւնները, խոստում նալով ազդել Թիւրքիայի վրա և իրագործել տալ խոստացված բարեկարգութիւնները: Մակեդոնական շարժումը համակրական արձագանք է գտել ոչ միայն Բոլղարիայի մէջ, այլ և Սերբիայի և Չերնոգորիայի, որտեղից կամաւորներ անցնում են թիւրքական սահմանները մակեդոնացիների հետ միանալու համար:

Ուրիշ հանգամանքներում այդպիսի բռնույն յուզմունքներ, ինչպէս Մակեդոնիային են, յարուցած կը լինէին շատ ծանր բարդութիւններ միջազգային կեանքի մէջ, բայց եւրոպան նախօրոք պայմանաւորվել է կըզդիացնելու ծագող և զարգացող շարժումը և ենթարկելու իր հեղինակութեան թիւրքութիւններին: Իրերի ծանր դրութիւնը, սակայն, ստիպում է քաղաքագէտներին մտածունքների մէջ ընկնել առաջիկայի վերաբերութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՆ

Մ Ա Տ Ն Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Թիֆլ. Վ. Արծրանի «Աղբիւր» խմբագրատան և խմբագրատան հետ: Հատոր առաջին. 224 էր., պատկերներով. գին 60 կոպէկ:

Մենք ապրում ենք սոցիալական յեղափոխութեան մի այնպիսի ժամանակում, առում է հէքէլ *), որը իւրաքանչիւր օր նորանոր առաջադրութիւն է կատարում: Հասարակութեան բոլոր խմբերում նկատելի է մի անհանգիստ շարժում, որը ձգտում է աւելի խոր ձեռնարկութիւններ կատարելու... Ապագայից է եկել հարցերի մի ամբողջ շարք, որ շարունակ աւելի ու աւելի լայն շրջաններ է զբաղեցնում, որի լուծման համար նորից ու նորից վէճեր են զարթոնում: Ահա այդպիսի հարցերի շարքում ամենանշանակալիցից մէկն է կատանց հարցը, որը օրէնքով աւելի ու աւելի առաջաւոր աեղ է զբաղում...:

*) A. Bebel „Die Frau“. Einleitung.

*) Արտատպութիւն է «Մուրճ» ամսագրից 1902 թ.

առում: Թեան և տգիտութեան մէջ, չունի ոչ մի խելացի գուարանութիւն՝ ոչ հոգեւոր, ոչ բարոյական և ոչ մտաւոր, մինչդեռ ֆինն գիւղացիներն ունենալով միայն մի կտոր հող, ապրում է լուսաւոր, դեղինգիկ տան մէջ, չընդադաժում է առողջապահական լաւ պայմաններով, ապահով է վարակիչ հիւանդութիւններից, գրագէտ է, մաքուր և վայելում է հոգեւոր, բարոյական ու մտաւոր զուարճութիւններ: Պատճառը, գրեթե խառնապէս, մեր կարծիքով, այն է, որ ֆինն գիւղացին ամենից առաջ հասկացել է այն ճշմարտութիւնը, թէ խելացի, առողջ, յարմար կեանք ստեղծելու համար, պէտք է որ ամեն մէկը ապրի ոչ միայն իր համար, այլ և ամենքի համար և ամենքը ապրեն մէկի համար: Չեմ կարծում, որ մեր Անդրկովկասի գիւղացին, ունենալով այնպիսի ճոխ և պարարտ բնութիւն, դեռ 50 տարի օրանից յետոյ էլ կարողանայ ստեղծել այն կուլտուրան, որ ֆինն աղքատ գիւղացին ստեղծել է իր համար:

Ֆինն գիւղացու ստեղծած այդ կուլտուրան երբեք կապ ունենալով հողատիրութեան և համայնական լայն ինքնավարութեան հետ, որ նա վայելում է, կարծում ենք, անհնաւերջ չի լինի մի քանի տեղեկութիւններ ունենալով միմյանցիւրեւ միմեկին համայնական կամ ծխական ինքնավարութեան մասին: Այդ տեղեկութիւնները մենք կը քաղենք Պրոտոպոպովի յայտնի աշխատութիւնից, որ մինչև այժմ ուռւ գրաւարութեամբ մէջ լոյս տեսաւ՝ ամենալաւ է անաչառ երկասիրութիւն է միմյանցիւրեւ մասին:

Հողատիրութիւնը միմյանցիւրեւ հին ժամանակները առաջ է եկել գրաւարութիւն, այսինքն ու կարողացել է անստաժ ծածկված մի հո-

ղաքածին այրել, մաքրել և վերածել դաշտի, նա համարվել է սեփականատէր այդ բաժնի: Այսօր ևս հիւսիսային մասերում այդ կերպով են գիւղացիները ձեռք բերում հող: Մինչև չվերականգնողութիւնը ամեն մարդ տիրում էր աղաւթների իր գրաւած հողը: Շվեդները, նուաճելով երկիրը, մտցնելով քրիստոնէսութիւն, մտցրին և չվերականգնողական կառավարութիւն, ամենից առաջ նրանք փոխեցին հարկային սխեման, այսպէս կոչված «մանտալը» (mantal), որ նշանակում է մարդազգույն, այն է փոխանակ անձնական հարկի, նրանք մտցրին հողային հարկի Առաջ ամեն մի տուն կամ ամեն մի անկախ գիւղական հողաբաժնի, որքան էլ մեծ և չափ լինէր նա, կազմում էր մի «մանտալ», բայց չվեցները հաստատեցին «մանտալը» հողաբաժնի որոշ մեծութեան համար, այնպէս որ հողատէր-գիւղացին վճարում է մի, երկու, կամ երեք «մանտալ», նայելով հողաբաժնի մեծութեան: Շվեդներից առաջ ամէն մի մարդ կամ «մանտալ» ինչքան անտառ տեղ կարողանում էր մաքրել, գրաւում էր և այդպիսով կային գիւղերի, որոնք աւելի շատ անտառ ունէին, քան ուրիշները: Շվեդները փոխեցին այդ կարգը և հաստատեցին այն քանակութիւնը, որ ամեն մի «մանտալ» գիւղում կարող է ունենալ, այդպիսով անտառները հաւասար կերպով բաժանվեցին գիւղերի մէջ: Դրանից դուրս ազատ մնացած անտառները դարձան կուլտուրութեան սեփականութիւն, և նա սկսեց այդ ազատ անտառահողերը բաժանել մասերի և առաջ նոր եկուրների կամ գողութիւններին, բայց ոչ իբրեւ սեփականութիւն, այլ վարձով, այն զանազանութեամբ միայն, որ վարձակալութիւնը ժառանգական է և վարձակալները, եթէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻՑ

V

Հանգէ, յուլիսի 27-ին

Ֆինլանդիան գլխաւորապէս գիւղացիների երկիր է. այնտեղ գիւղացիների թագաւորութիւնն է: Մենք տեսնել, որ գիւղական ժողովուրդը կազմում է երկրի ամբողջ ազգաբնակչութեան 90% տոկոսը, մինչդեռ քաղաքային ժողովուրդը կազմում է միայն 10-9%: Ազգաբնակչութեան այդ կազմաւածքը, այսինքն գիւղական ժողովուրդի այդպիսի բացարձակ գերակշիռութիւնը նշանաւոր ազդեցութիւն է գործել միմյանցիւրեւ քաղաքական, բնկերական և տնտեսական կեանքի վրա: Քաղաքական տեսակէտից ազգային ժողովի կամ սեյմի մէջ գիւղական ազգաբնակչութեան շահերի ներկայացուցիչներ հանդիսանում են ոչ միայն գիւղական դասակարգի պատգամաւորները, այլ և ազնականները և հողորոտականութիւնը, որոնք շատ սերտ կապված են գիւղական դասակարգի հետ: Այդ պատճառով ֆինլանդական սեյմի մէջ կուտակութիւններ չը կան և չը կայ երկրի մէջ ազգաբնակչի, հողատէրերի կուտակութիւն, որի շահերը հակառակ լինէին գիւղական ժողովուրդի շահերին:

Ընկերական կամ սոցիալական տեսակէտից՝ գիւղական ազգաբնակչութեան գերակշիռութիւնը ունեցել է երկրի համար այն բարերար հետեւանք, որ ֆինն հասարակութեան մէջ բարեբեր և կեանքի եղանակը պարզ, նահապետական են մնացել և երկստատարութիւնը բարո-

(Գը շարունակվի)

այն զինւորը, որը գտնակողով էր ուսանական պատուով ծառայող իտալացուն:

4. ՊՈԼԻՍ. Եկան 880 փախուսածներ Կիրի-քիլիսէից. նրանք ապրում են կառավարութեան և տեղեկական պատրիարքի հաշուով: Ապստամբութիւն բռնկված տեղը ուղարկված են 5 բաւալիօն զօրքեր և 3 լեւոնային թնդանօթներ: Միւսները խորհրդում վճռված է արտակարգ միջոցներ ձեռք առնել այն դէպքում, եթէ դրութիւնը վատանայ: Արեւելեան երկաթուղու մօտ երևացին ապստամբներ: Աւերված են հեռագրական գծերը դէպի Տիր-նովո:

ԲԵԼԳՐԱԴ. Կէրվանկոյ գիւղի մօտ, Մակե-դոնիայում, տեղի ունեցած ընդհարման ժա-մանակ, ապստամբները զինամիտով օդը թողրին աշտարակի այնտեղ փախած 250 բա-շիբուզներով:

ԲԵԼԳՐԱԴ. Կայացաւ Գորկիի «На Днѣ» գրա-մայի 200-դ ներկայացումը Գորկիի ուղարկեց թատրոնի վարչութեանը մի շքեղ ալբոմ գրա-մայի այն տեսարաններից, որ Մօսկվայում էին ներկայացրել: Թատրոնի իւրաքանչիւր արտիս-տին նա ուղարկեց իր պատկերը ձօնով:

ՍՕՅԻՍ. Ֆիլիպպովսկի օտարական կա-նոնները, տեղեկանալով, որ կօմիտե-րիատում թաքնված է կասկածելի անձնաւո-րութիւն, հրամայեցին ժամադրման հետամուտ լինել նրան. վերջինս կասկածելի անձի փողո-սում երևալու վայրկեանին աշխատում էր ձեռ-բակելով նրան, բայց այդ անձը փախաւ և թաքնվեց կօմիտեի տնային Կօմիտեի Խիւմ-բէյի միջամտելով գործին, ապառնաց ժամադր-ման և ճանապարհ դրեց կասկածելի անձին դէ-պի կայարան, ուղարկելով նրան Կ. Պօլիս: Կօ-միտեի եւտանդաթ բողոքի պատճառով ժամ-դարմը տրված էր պաշտօնից:

Կ. ՊՈԼԻՍ. Բէյրութում սպանված ամէրիկա-կան փոխ-հիւպատոսի ազգանունը Մաքէլլէն է: Կ. Պօլիս ամէրիկական դեսպանը և թիւր-քաց արաբները գործերի միջնորդը կտրական կերպով հերքում են, առելով թէ իրանց ու-չինչ յայտնի չէ հիւպատոսի սպանութեան մա-սին Բէյրութում: Ամէրիկական պատերազմա-կան նաւերի Բէյրութ ուղարկելը նախազգու-շութեան միջոց է համարվում: Մինչև որ սպանութեան մասին մանրամասնութիւններ չը պարզվեն, կտրական միջոցներ ձեռք չեն առնվել:

ՕՅՍԵԻՐԱՍ. Նախագահ Բուզլէլտ հրա-մայեց Միացեալ-Նահանգների եւրօպական նա-ւատորմին անյապաղ ուղևորվել դէպի Բէյ-րութ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Խարաղուում, Դիարեքիի վերջնական փորձ են արել հրդեհել ամէրի-կական օտար միսսիային պատկանող եփրա-տեան կօլէջի շինութիւնը:

ՎԻԵՆՆԱ. Վիլհելմ կայսրը կը ժամանէ սեպ-տեմբերի 5-ին:

ԲՈՒԴԱՊԵՇՏ. Ի նկատի ունենալով անդիա-կան թաղաւորի գաղութը, կոմս Կոն Խէ-դէրվարի ուղևորվում է Վիեննա:

ՈՒԴԻՆԻ. Պաղատիսի և Կօթրօյաթի միջև զին-ւորական գնացքը ընդհարվեց ապրանքատար գնացքի հետ: 15 մարդ սպանված են և 60 հո-գի վիրավորված:

Կ. ՊՈԼԻՍ. Սուլթանական իրադէն միութեան (ուսիֆիկացիա) մասին դեռ եւ չերկաց: Զուրկ են հիմքից սուլթանի բացասական վճռի մա-սին լուրերը:

ՊԱՐԻՉ. Ժէի մօտ (Իւրայի դեպարտամենտ) բանտները գտան մի ռուս տիկնոջ մարմին, որի ճակատը ծակված էր բեզովէրի գնդակով: Նրա կողքին գտան էլի հինգ գնդակներով լրջ-ված բեզովէր, փոքրիկ բիշկիլի սև կաշիք և մոխրադոյն վերարկու, որ գնված էր Օդէ-սայում: Մնթադրում են ինքնասպանութիւն:

ԲՈՒԴԱՊԵՇՏ. Ունգարական և աւստրիական Քիւստնական միսսիոները միջև կապված է համաձայնութիւն, որի հիման վրա օգոստոսի 19-ից Ունգարիայի և Աւստրիայի միջև չրջա-նառութիւն ունեցող շաքարի վրա 31/2 կոմս լրացուցիչ մաքսահարկ է դրվում:

ՏԵԼԵԳՐԱԲ. Չինացիները կը յանկանային ծախել Նիւ-Չիւանեան երկաթուղին, որովհետև առեւտրական ձեռնարկութեան տեսակէտից նա անյուշալի է:

ՀԱՄԲԱ. Եթէ միջնորդ դատարանը վենե-ցուլական հարցի վերաբերմամբ չը գումարով մինչև օգոստոսի 11-ը, այն ժամանակ սպա-սվում է ռուսական միսսիոնարի հաղորդագրու-թիւնը կարճատև յետաձգման մասին:

Կ. ՊՈԼԻՍ. Յանցաւոր փորձը «Orient-ex-press»-ի վրա կատարել են բողոքները:

Կ. ՊՈԼԻՍ. Բէյրութի հինգերորդ և վեցե-

րորդ զիմիդիաները զենքի են կանչված. բացի դրանից սպառազինված են 2-րդ կտրի բէ-դիֆներ 16 բաւալիօններ, որ երկու զիմի-դիաների հետ կը կապէ: Կիւք զիմիդիաները Այստեղ նոյնպէս արված են նշանաւոր պատ-րաստութիւններ, սակայն միայն անպայման անհրաժեշտները: Անհիմն են պատերազմի հա-մար մեծ պատրաստութիւններ տեսնելու լու-րերը:

Կ. ՊՈԼԻՍ. Բէյրութում տեղի ունեցած դժ-բաղդ դէպքի մասին ծածկաւոր հետազոյի մէջ-սխալ էր սպորդել, ոչ թէ սպանութիւն է կա-տարվել, այլ փորձ է եղել սպանելու ամէրի-կական փոխ-հիւպատոսին: Մի անյայտ մարդ բեզովէր արձակեց նրա վրա, բայց գնդակը մօտից անցաւ, թէպէտ քիչ էր մնում կպչէր նրան:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Եթէ Թիւրքիան լրիւ չը կա-տարէ ամէրիկական պահանջները, այն ժամա-նակ նաւատորմը հրաման կը ստանայ գրաւե-լու մէկ կամ երկու նաւահանգիստ: Նաւա-հանգիստների գրաւումը կը շարունակվի մինչև պահանջների կատարումը: Այդ դէպքում ամէ-րիկական դեսպանը յետ կը կանչվի, իսկ գոր-ծերի վարումը կը յանձնվի մեծ-բրիտանական դեսպանութեան:

ՆԻՅՏԱ. Ամէրիկական նաւատորմը Վիլյա-մքանից եկաւ Պէնսելա, որտեղից երեք վաղը կուղևորվի Բէյրութ:

ՍՕՅԻՍ. Ապստամբների հրոսակախումբը, Արաւոզօյի առաջնորդութեամբ, զինամիտով օդը թողրեց արաբիկական զօրանոցը Ազրիա-նօպօլում: Մի քանի սպանվածներ և վիրաւոր-վածներ կան: Բանակը քաղաքի շուրջը կրակի մէջն է: Սարաֆի է տիրում: Կուլէլի-Բուր-գասի մօտ պայթիւնի առիթով յատուկ յանձ-նաժողովը քննութիւն է կատարում: Ենթա-դրում են, որ պայթիւնն առաջացրել են ժա-մացոյցի մեխանիզմ ունեցող զինամիտային ռուսներով, որը արկղով ուղարկել են Բուզա-պէլից: Մէխանիզմը անպէտ էր սարքված, որ պայթիւնը պէտք է տեղի ունենար երկաթ-թուղիական մեծ կամուրջի վրա Մարիցայի վրայով Կուլէլի-Բուրգասի մօտ, բայց պայ-թիւնը օւնելի վաղ առաջացաւ: Աղբիւսօպօլի թիւրքաց զինւորական իշխանութիւնը զինու-րական ոյժեր ուղարկեց բողոքական սահմա-նի վրա: Շատ գիւղեր հրկիզութեան են են-նաթողվում: Ապստամբների հրոսակախումբը ուղևորվեց Սպուանուի վրայով դէպի Կ. Պօլիս:

Կ. ՊՈԼԻՍ. Այստեղ ստացված են հետեւալ տեղեկութիւնները ընդհարումների վերաբեր-մամբ. օգոստոսի 5-ին Տիրսօփի մօտ երկու բաւալիօն չրջապատված էին երեք օր շա-րունակ հրոսակախումբերով: Վաթիլիօի և Մի-դիայի մօտ տեղի ունէին ընդհարումներ հրո-սակախումբերի հետ: Կիրի-Ֆիլիսում յօստում են, որ առաջիկայում զինամիտային յանցաւոր փորձեր են լինելու հասարակական շինութիւն-ների և հիւպատոսական գործակալութիւննե-րի դէմ: Հիւպատոսութիւնը Ազրիանօպօլում պաշտպանութիւն խնդրեց վախճալ: Թիւրքաց 24 պաշտօնական անձերից Ուսկիւր վրայէտի արեւմտեան մասում, որոնց պատճելու մասին խնդրեցին ռուսաց և աւստրօ-ունգարական հիւպատոսները և որը ապա նորերս պահանջ-վեց, ակումտ մինչև այժմ ցոյց է տրված մի-այն ինչը: Կիւք-Ֆիլիսայի կօմիտեան Վալի-փաշան դուրս եկաւ երեք բաւալիօններով ապստամբներին հալածելու համար: Այստեղ հասան առաջատար նաւեր մահմեդական և յոյն փախուսականներով Կիրի-Ֆիլիսայի օսմ-լակի ծովափնայ տեղերից:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Կ. Պօլիս ամէրիկական դես-պանը դիմեց թիւրքաց կառավարութեանը, խնդրելով անյապաղ միջոցներ ձեռք առնել Խարաղուում ապրող ամէրիկացիների պաշա-պանութեան համար:

ԿԻՐԱՌԻԷՎԱՍ. Ժամանեց Պեթր թագաւորը պրինցներին հետ միասին: Օթիցները ընդու-նեկութեան ժամանակ նրանցից մէկը, որը ող-ջունեց թագաւորին ճառով, յայտնեց, որ օ-թիցները գտնվում են նրա տրամադրու-թեան տակ: Թագաւորը պաւասխանեց. «Մենք ծանր օրեր ենք քաշում: Անհրաժեշտ է շատ խելք, խիստ անքիւր եւ ետանդ լաւ և աղոյ տանելու հա-մար սերբիական պետական նաւեր: Շատ կարելի է հայրենիքը շուտով կը պահանջէ մեզանից ծա-ռայութիւններ, և ես յոյս ունեմ, որ դուք միշտ ի նկատի կունենաք ազգի շահերը: Երե-կան ի պատիւ թագաւորի կայացաւ ջահ-ընթացը: Պրօֆէսօր Մարեանովիչ դիմեց թա-գաւորին մի ճառով, մատնացրեց անելով, որ թագաւորը պարտաւոր է փառաւոր Կարա-Պօլզիի գաղափարի շարունակողը լինել և

բաց անել Բալկանների վրա ազատութեան դրօշակը: Միայն այդ ճանապարհով ապագա-յում կարելի է իրագործել սերբիական տեն-չանքը: Թագաւորը պատասխանեց, որ բոլորն էլ պարտաւոր են միատեղ աշխատել ազգի բարօրութեան համար: Բոլոր քաղաքացիները առանց զանազանութեան նրա ամենալաւ բա-րեկամներն են: Իւրաքանչիւրը պարտաւոր է գործել իր հասկացողութեամբ: Նա ցանկա-նում է սիրել ազատ քաղաքացիներին: Երբ թագաւորը և ժողովուրդը ապրում են համա-ձայնութեան մէջ—մեծ և երջանիկ ապագայի համար բոլոր պայմանները կան ուրեմն:

ՎԻԵՆՆԱ. Անցեալ օրը ապստամբների մի զօրաբաժին յարձակվեց Մէլէսկա գիւղի վրա Մօնասթիրի վրայէտում: Բերդապահ զօրքը զիմադրութիւն ցոյց տուեց, բայց ստիպված էր յետ քաշվել: Մի քանի ժամ տեղ կուրց յետոյ հրոսակները մասամբ սպանվեցին, մա-սամբ ցրվեցին և գերի բռնվեցին: Ազգաբա-կութիւնը վերադարձաւ գիւղը, որը պահպան-վում է զօրքերով:

Կ. ՊՈԼԻՍ. Ուսկիւրի վրայէտում ապստամ-բութիւնը արագ տարածվում է: Կօյլի մօտ ապստամբները պատերազմում էին թիւրքաց զօրքերի հետ 11 ժամ Ուսկիւրի վրայէտում սարսափ է տիրում:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴԱՆԵՐԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԿ-ԱՂԱՄԱՆԱՆ

Ի Դ Է Պ
10 ՕՐ ՎԱՅ ՀԱՄԱՐ
Թամայեանների ջարմանատարի 50-ամեայ յօրեանի առթիւ նշանակվում են պակասեց-րած գներ բոլոր և ամեն տեսակ ապրանքներ:
18-ից ՄԻՆՉԵԻ 28-Ը ՕԳՈՍՏՈՍԻ
Գները վերջնական են (տաճնց օակարկութեան): 1—1

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Թիֆլիս, Միքայէլեան փողոց, № 161.
Պարագմունքներ կը տեղեկան սեպտեմբերի 10-ին: Դասընթացը կիսամեայ է, Մանկավար-ժական կազմը—լաւագոյն մասնագէտներից, Կուրսերին կից կան ապրանքային մաթեմատիկա, գրագա-րան և բիւրօ. ընդունվում են երկու սեռի անձինք: Մրադիրը—Ս. Պետրեւորդի կուրսերի նման: Դասախօսութիւնները ապրանքագիտութիւնից, առեւտրական տնտեսագիտութիւնից, Կաշազի-տութեան զանազան ձեւերից—բանկային, երկաթուղային, պետական, խմբեղէնի արքունի վաճառման, գործարանային և այլն: Խնդիրներ ընդունվում են մինչև սեպտեմբերի 10-ը կուր-սերի դիւնատմանը: Միքայէլեան փողոց, № 161, առաւօտեան ժամի 9-ից մինչև ժամի 1-ը և երեկոյեան 5—8-ը:
Հիմնադիր Ի. Բրոն Ֆոն Բրէնկեր:
8—15

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ
(INJECTION AU MATICO)

Գրիմօ և ընկ զեղադրոնների թոյլ է արված Ռուսառ-ամատում Այս հեղուկի մէջ շահագործված են պերուա-նական Մատիկօ ընդի յատկութիւնները, մի ընդի, որ զարմանալի կերպով բժշկում է հոտորէյը (սերմնաթա-փութիւն) և մի քանի տարվա ընթացքում համաշ-խարհային հռչակ է ստացել: Ծարձ ժամանակում բու-ժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները:
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր զեղաւորներում:
(2, 17) 17—24

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
(Тифлисть, Сололаки, Лермонтовская ул., № 9)
Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահ-ներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Աւանդելի առարկաները արանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրա-կան Թուղթագրութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուա-բանութիւն համբիւր վրա. 5) Առեւտրական թղթագրութիւն. 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գնդագրութիւն, վառ ձեռքի ուղղելը:
Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարագմունքներ կուրսե-րում լինում են ամեն օր:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդուսովի տանը № 9, Սերգիեյվկայա և Լերմոնովսկայա փողոցների անկիւնում: Մրադիրը և կանոնները կարելի է տեսնալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբողջացրեղ դի-ւում են՝ Тифлисть, С. П. Мануэляну:
(5, 4) 16—25